ՆԱԽԱԳԻԾ 52

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« » 2011 թվականի N-Ն

ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունվարի 13-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» որոշման 30 կետի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. 2011 թվականին Երևանում կազմակերպել «Հայ առևտրաարդյունաբերական պալատների ներկայացուցիչների հավաք», «Սփյուռքի ՀԼՄ-ների երիտասարդ լրագրողների դպրոց», «Ճարտարապետների և շինարար-ճարտարագետների համահայկական երկրորդ համաժողով» և «Սրտաբանության եվրակովկասյան համաժողով» համաժողովները:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեով նախատեսված 08 բաժնի, 02 խմբի, 05 դասի «04.Մշակութային միջոցառումների իրականացում» ծրագրի «Հայաստանի Հանրապետությունում համահայկական խորհրդաժողովների անցկացում» միջոցառման շրջանակներում՝ «Հայ առևտրաարդյունաբերական պալատների ներկայացուցիչների հավաք», «Սփյուռքի ՀԼՄ-ների երիտասարդ լրագրողների դպրոց», «Ճարտարապետների և շինարար-ճարտարագետների համահայկական երկրորդ համաժողով» և «Սրտաբանության եվրակովկասյան համաժողով» համաժողովների կազմակերպման ծրագրերը՝ համաձայն N 1, 2, 3 և 4 հավելվածների:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀՐԱՆՈՒՇ ՀԱԿՈԲՅԱՆ

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2011 թվականի
N որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

«ՀԱՅ ԱՌԵՎՏՐԱԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՊԱԼԱՏՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՎԱՔ» ՀԱՄԱԺՈՂՈՎԻ

I. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1.Սույն նախաձեռնությունը Հայ-Կանադական գործարար խորհրդինն է, որը Սփյուռքի նախարարությանը ներկայացվել է 2010 թվականի սեպտեմբերին: Համաժողովի կազմակերպիչներն են՝ ՀՀ սփյուռքի նախարարությունը, Հայ-Կանադական գործարար խորհուրդը և Հայաստանի առևտրաարդյունաբերական պալատը: Ակտիվորեն ներգրավված են նաև ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը, Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միությունը, Հայկական զարգացման գործակալությունը: «Հայ առևտրաարդյունաբերական պալատների ներկայացուցիչների հավաք», համաժողովն անցկացվելու է Երևանում, 2011 թվականի ապրիլի 29-30-ը, որին մասնակցելու են 60 մասնակից:

II. ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՆՊԱՏԱԿԸ

2.Համաժողովի նպատակն է գործող հայկական գործարար ընկերակցությունների (միավորումների) համահայկական ցանցի և առևտրաարդյունաբերական պալատների կամ բիզնես խորհուրդների ձևավորումը և այդ կառույցներում ծագումով հայ գործարարների ներգրավումը:

III. ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

3.Համաժողովի հիմնախնդիրներն են՝

1) գործարար ընկերակցությունների և ներգրավված անդամների միջև հաղորդակցությունն ապահովելու նպատակով համագործակցության հարթակի ստեղծում՝ նպաստելով բիզնես նախագծերի, ծրագրերի համատեղ իրականացմանը,
2) Հայաստանի և Արցախի ներդրումային մթնոլորտի և նոր ներդրումային հնարավորությունների վերաբերյալ սփյուռքի գործարար և համայնքային կառույցներին տեղեկատվություն տրամադրելը և ծրագրեր առաջարկելը,

IV. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

4.Ակնկալվող արդյունքներն են՝

1) Տարբեր երկրների փորձի կիրառմամբ Հայաստանի բիզնես մթնոլորտի բարելավում, հնարավորինս պարզեցում,
2) համազգային նշանակություն ունեցող հացերին աջակցելու համար՝ համահայկական գործարար ցանցի ստեղծում,

3) հայկական սփյուռքի ներուժի նպատակային կիրառման ուղղությունների ճշտում,

4) Հայաստան-Սփյուռք կապերի հետագա ամրապնդման մեխանիզմների հստակեցում:
5) Սփյուռքում նոր գործարար ընկերակցությունների ստեղծում,

V. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ

5.Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 23-ի N 1748-Ն որոշման համաձայն Ծրագիրը Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության պատվերով իրականացնելու է «Հայրենիք-սփյուռք կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը:

VI. ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

6. «Հայ առևտրաարդյունաբերական պալատների ներկայացուցիչների հավաք», համաժողովի ծրագրի իրականացման համար պահանջվող գումարը կազմում է՝ Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեով նախատեսված 08 բաժնի, 02 խմբի, 05 դասի «04.Մշակութային միջոցառումների իրականացում» ծրագրի «Հայաստանի Հանրապետությունում համահայկական խորհրդաժողովների անցկացում» միջոցառման շրջանակներում՝ 1000000 /մեկ միլիոն/ ՀՀ դրամ:

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2011 թվականի
N որոշման

ԾՐԱԳԻՐ
«ՍՓՅՈՒՌՔԻ ԶԼՄ-ՆԵՐԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ԴՊՐՈՑ» ՀԱՄԱԺՈՂՈՎԻ

I. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1.Հայ լրագրողների 5-րդ համահայկական համաժողովում բարձրացված խնդիրներից մեկն առնչվում էր սփյուռքյան համայնքային ԶԼՄ-ների աշխատակիցների վերապատրաստմանը Հայրենիքում: Շեշտադրվում էր, որ սփյուռքում քիչ են լրագրողական մասնագիտացում ունեցող հայ երիտասարդները, ովքեր կկարողանան շարունակել ավագների գործը:
ՀՀ սփյուռքի նախարարությունն այս խնդրի առնչությամբ որոշում կայացրեց Երևանի պետական համալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտետի հետ իրագործել երիտասարդ լրագրողների մասնագիտական որակավորման բարձրացման դասընթացների համատեղ ծրագիր: Ծրագրի ընթացքում սփյուռքի երիտասարդ լրագրողները հնարավորություն կունենան տեսական և գործնական գիտելիքներ ստանալ Հայաստանի ճանաչված և բազմափորձ լրագրողներից, ծանոթանալ Հայաստանի Հանրապետության ներքին և արտաքին քաղաքական հիմնախնդիրներին, պատմամշակութային վայրերին ու կոթողներին, ներկա լինել համահայկական նշանակության խնդիրների պարզաբանմամբ դասախոսությունների:

«Սփյուռքի ԶԼՄ-ների երիտասարդ լրագրողների դպրոց» համաժողովն անցկացվելու է Երևանում 2011 թվականի հունիսի 27-ից մինչև հուլիսի 16-ը, որին մասնակցելու են 20 մասնակից:

II. ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՆՊԱՏԱԿԸ

2. Համաժողովի նպատակն է՝

Սփյուռքի շնորհալի և լրագրողական հակում ունեցող երիտասարդների ընդգրկել լրագրողների մասնագիտական որակավորման բարձրացման դասընթացներին և նման հավաքների միջոցով բարձրացնել սփյուռքահայ երիտասարդ լրագրողների մասնագիտական մակարդակը՝ Սփյուռքի հայկական ԶԼՄ-ներին որակյալ մասնագետներով ապահովելու նպատակով:

Դասընթացներին կարող են մասնակցել ինչպես արդեն որևէ ԶԼՄ-ներում աշխատող, այնպես էլ համայնքների կողմից երաշխավորված շնորհալի երիտասարդները, ովքեր ցանկանում են աշխատել Սփյուռքի հայկական ԶԼՄ-ում:

III. ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

3.Համաժողովի հիմնախնդիրն է՝

Սփյուռքյան լրատվամիջոցները և նրանց ղեկավարները տարիների հետ «ծերանում են»: Այս խնդրին դիմակայելու համար անհրաժեշտ է պատրաստել և վերապատրաստել երիտասարդ լրագրողներ, որոնք նոր շունչ կհաղորդեն սփյուռքյան հայկական զանգվածային լրատվամիջոցներին:

IV. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

4.Ակնկալվող արդյունքն է՝

Ամրապնդել Սփյուռքի ԶԼՄ-ն՝ համալրելով դրանք որակյալ, պատրաստված երիտասարդ աշխատակիցներով, դրանով իսկ բարձրացնելով Սփյուռքի հայ համայնքներում հայկական ԶԼՄ-ների դերն ու հեղինակությունը: Սփյուռքի հայկական ԶԼՄ-ն Հայրենիք-Սփյուռք գործակցության հիմնաքարերից է և նրանց լիարժեք գործունեությունն անհրաժեշտ պայման է այդ գործակցության արդյունավետությունը բարձրացնելու համար:

V. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ

5.Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 23- ի N 1748-Ն որոշման համաձայն Ծրագիրը Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության պատվերով իրականացնելու է «Հայրենիք-սփյուռք կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը:

VI. ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

6.«Սփյուռքի ԶԼՄ-ների երիտասարդ լրագրողների դպրոց» համաժողովի ծրագրի իրականացման համար պահանջվող գումարը կազմում է՝ Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեով նախատեսված 08 բաժնի, 02 խմբի, 05 դասի «04.Մշակութային միջոցառումների իրականացում» ծրագրի «Հայաստանի Հանրապետությունում համահայկական խորհրդաժողովների անցկացում» միջոցառման շրջանակներում՝ 5000000 / հինգ միլիոն/ ՀՀ դրամ:

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2011 թվականի
N որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր
«ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐԻ ԵՎ ՇԻՆԱՐԱՐ- ՃԱՐՏԱՐԱԳԵՏՆԵՐԻ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ»

I. ՆՊԱՏԱԿԸ

1.Համաժողովը նպատակ ունի քննարկելու և ամփոփելու Ճարտարապետների և շինարար-ճարտարագետների համահայկական ընկերակցության աշխատանքները սկսած հիմնադրումից (2009թ.), հստակեցնելու հետագա աշխատանքները և ծրագրերը:

«Ճարտարապետների և շինարար-ճարտարագետների համահայկական երկրորդ համաժողով» համաժողովն անցկացվելու է Երևանում, 2011 թվականի հունիսի 29-30-ը, որին մասնակցելու են 50 մասնակից:

II. ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

2.Համաժողովի հիմնախնդիրներն են՝

1) Ճարտարապետների և շինարար-ճարտարագետների համահայկական ընկերակցության աշխատանքների քննարկումը,

2) բնագավառի համահայկական ներուժի հետագա համախմբման արդյունավետ մեխանիզմների քննարկումը,

3) առաջիկա ծրագրերի և միջոցառումների նախագծի ներկայացումը:

III. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

3.Ակնկալվող արդյունքներն են՝

1) համաժողովի անցկացումը,

2) Ճարտարապետների և շինարար-ճարտարագետների համահայկական ընկերակցության առաջիկա ծրագրերի և միջոցառումների անցկացման ձևաչափի հստակեցումը,

3) համահայկական ճարտարապետների բիենալեի անցկացումը,

4) բնագավառում ներուժի հետագա հայտնաբերման և համախմբման ուղիների հստակեցումը:

IV. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ

4.Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 23- ի N 1748-Ն որոշման համաձայն Ծրագիրը Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության պատվերով իրականացնելու է «Հայրենիք-սփյուռք կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը:

V. ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

5.Ծրագրի իրականացման համար պահանջվող գումարը կազմում է՝ Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեով նախատեսված 08 բաժնի, 02

խմբի, 05 դասի «04.Մշակութային միջոցառումների իրականացում» ծրագրի «Հայաստանի Հանրապետությունում համահայկական խորհրդաժողովների անցկացում» միջոցառման շրջանակներում՝ 1500000 /մեկ միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ:

Հավելված N 4
ՀՀ կառավարության 2011 թվականի
N որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

«ՍՐՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎՐԱԿՈՎԿԱՍՅԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ»

I. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1.Սրտաբանության եվրակովկասյան համաժողովն առաջին անգամ կազմակերպվել է 2007 թվականին՝ Հայաստանում, որը կազմակերպել է Ֆրանսիայի «Ակցիա առողջություն Հայաստան-Ֆրանսիա» կազմակերպությունը: Համաժողովը մաս է կազմում այն ծրագրերին, որոնք «Ակցիա առողջություն Հայաստան-Ֆրանսիա» կազմակերպությունը 1993 թվականից իրականացնում է Հայաստանում: Կազմակերպությունը գրանցված է Ֆրանսիայում, որի կազմում ընդգրկված են հայազգի և օտարերկրյա բժիշկներ:

Սրտաբանության եվրակովկասյան երկրորդ համաժողովը կազմակերպվել է 2009թ. հոկտեմբերի 29-30-ը «Ակցիա Առողջություն Հայաստան-Ֆրանսիա» կազմակերպության և ՀՀ սփյուռքի նախարարության հետ համատեղ, որին մասնակցել են Հայաստանի շուրջ 230 և աշխարհի տարբեր երկրներից ժամանած շուրջ 100 սփյուռքահայ և այլազգի սրտաբաններ:

Համաժողովի նպատակն է հայտնաբերել և համախմբել աշխարհի հայ սրտաբանների ներուժը՝ զարգացնել Հայաստանում բժշկագիտությունը, նպաստել Հայաստանի Հանրապետության և Սփյուռքի սրտաբանների համագործակցությանը, մասնագիտական որակների բարձրացմանն ու կատարելագործմանը, նորարարական հմտությունների փոխանակմանը, ինչպես նաև նոր որակ հաղորդել սրտաբանների հետագա համագործակցությանը:

Կազմակերպության նախաձեռնությամբ և ֆինանսավորմամբ Հայաստանի Գորիս քաղաքում 2008թ. մեկնարկվել են սրտաբանական կենտրոնի կառուցման աշխատանքները, որի շինարարական աշխատանքներն ավարտին են հասցվել 2010թ. հոկտմբեր ամսին:

Սրտաբանության եվրակովկասյան համաժողովի կազմակերպման նպատակն է հնարավորություն ընձեռել հայ կարդիոլոգներին արտերկրյա կարդիոլոգների հետ միջազգային փորձը փոխանակելու, ինչպես նաև Հայաստանն այդ բնագավառում տարածաշրջանային առաջատար դարձնելու համար:

«Սրտաբանության եվրակովկասյան համաժողովն» անցկացվելու է Երևանում, 2011 թվականի հոկտեմբերի 29-30-ը, որին մասնակցելու են 250 մասնակից:

II. ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

2. Համաժողովի հիմնախնդիրներն են՝

1) Սրտաբանության բնագավառում Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման խնդիրների քննարկումը.

2) սրտաբանության բնագավառում միջազգային փորձի փոխանակումը
3) Հայաստանում սրտաբանության ոլորտում նորամուծությունների ներկայացումը.
4) սրտաբանության բնագավառում համահայկական ներուժի համախմբման մեխանիզմների քննարկումը:

III. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

3.Ակնկալվող արդյունքներն են՝

1) Սրտաբանության ոլորտում Հայաստան-Սփյուռք կապերի և համագործակցության շարունակական ապահովումը.
2) համատեղ ծրագրերի և դրանց իրականացման ձևերի հստակեցումը.
3) Հայաստանում սրտաբանության ոլորտի արդյունավետ ծրագրերի մշակումը.
4) հայկական Սփյուռքի սրտաբանության ոլորտի ներուժի նպատակային կիրառման ուղղությունների ճշտումը.
5) Սրտաբանության բնագավառում Հայաստան-Սփյուռք կապերի հետագա ամրապնդման մեխանիզմների հստակեցումը:

IV. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ

4.Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 23- ի N 1748-Ն որոշման համաձայն՝ ծրագիրը Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության պատվերով իրականացնելու է «Հայրենիք-սփյուռք կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը:

V. ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

5. «Սրտաբանության եվրակովկասյան համաժողովն» իրանացվելու է «Ակցիա առողջություն Հայաստան-Ֆրանսիա» կազմակերպության և ՀՀ սփյուռքի նախարարության համաֆինանսավորմամբ: Համաժողովի կազամակերպման համար ՀՀ սփյուռքի նախարարության կողմից պահանջվող գումարը կազմում է՝ Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեով նախատեսված 08 բաժնի, 02 խմբի, 05 դասի «04.Մշակութային միջոցառումների իրականացում» ծրագրի «Հայաստանի Հանրապետությունում համահայկական խորհրդաժողովների անցկացում» միջոցառման շրջանակներում՝ 2500000 /երկու միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ:

Իրավական ակտի հիմնավորումը	
1.	Անհրաժեշտությունը
	ՀՀ նախագահի նախընտրական ծրագրում, ՀՀ կառավարության ծրագրերում համազգային ներուժի համախմբումը դիտարկվում է որպես գերակա ուղղություն: Ելնելով այդ հրամայականից՝ 2008թ. թ սկսած ՀՀ սփյուռքի նախարարությունն իրականացնում է համահայկական համաժողովներ, որոնք միտված են վերոհիշյալ ուղղության իրականացմանը: Սույն համաժողովների կազմակերպման անհրաժեշտությունը բխում է Հայաստան-Սփյուռք կապերի արդյունավետությունը բարձրացնելու, համահայկական ձևաչափով քննարկումներ անցկացնելու և համատեղ ծրագրերի նախագծեր մշակելու հրամայականներից:
2.	Ընթացիկ իրավիճակը և խնդիրները
	1999, 2002 և 2006թթ. Հայաստանում Հայաստան-Սփյուռք ձևաչափով տեղի են ունեցել համահայկական խորհրդաժողովներ, այնուհետև նման խորհրդաժողովներ չեն իրականացվել: ՀՀ սփյուռքի նախարարության ստեղծումից հետո տեղի են ունենում համահայկական ձևաչափի տարբեր համաժողովներ, որոնք հնարավորություն են տալիս համահայկական ձևաչափով քննարկելու կարևորագույն այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են հայապահպանությունը, հայրենադարձության հնարավորությունը, Հայաստան-Սփյուռք կապերի ամրապնդումը և այլն: Համաժողովի հիմնախնդիրներն են՝ 1) Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման խնդիրների քննարկումը. 2) հայապահպանության և համայնքների հիմնախնդիրների լուծման հարցերի քննարկումը. 3) հայրենադարձության հնարավորությունների քննարկումը. 4) Հայաստանի և Սփյուռքի միջև տարբեր բնագավառներում պետական և ազգային ծրագրերի իրականացման հնարավորությունների քննարկումը. 5) համահայկական ներուժի համախմբման մեխանիզմների քննարկումը:
3.	Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը
	Բնագավառում քաղաքականություն է իրականացնում ՀՀ սփյուռքի նախարարությունը՝ 2008թ. սկսած: Կազմակերպվել է համահայկական մոտ 10 համաժողով:
4.	Կարգավորման նպատակը և բնույթը
	Կարգավորումը նպատակ ունի Հայաստան-Սփյուռք ձևաչափով քննարկելու համահայկական բնույթի հիմնախնդիրները և մշակելու դրանց լուծմանն ուղղված ծրագրեր և մեխանիզմներ:
5.	Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձիք
	Նախագծի մշակման գործընթացում ներգրավված են ՀՀ-ում գործող

	տարբեր վերլուծական կենտրոնների ներկայացուցիչներ և սփյուռքահայեր:
6.	Ակնկալվող արդյունքը
	Ակնկալվող արդյունքներն են՝ 1) Հայաստան-Սփյուռք կապերի և համագործակցության հետագա ձևաչափի հստակեցումը. 2) համատեղ ծրագրերի և դրանց իրականացման ձևերի հստակեցումը. 3) հայապահպանության արդյունավետ ծրագրերի մշակումը. 4) հայկական սփյուռքի ներուժի նպատակային կիրառման ուղղությունների ճշտումը. 5) Հայաստան-Սփյուռք կապերի հետագա ամրապնդման մեխանիզմների հստակեցումը:
7.	Այլ տեղեկություններ (եթե այդպիսիք առկա են)
	չկան

Պետական բյուջեում կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեների վրա ազդեցությունը					
Ցուցանիշներ	**ընթացիկ (n-րդ) տարի**		Հաջորդող 3 տարիները		
			n +1	**n +2**	**n +3**
	Ըստ n -րդ տարվա պետական բյուջեի	փոխու-թյունը n -րդ տարվա պետա-կան բյուջեի համեմատ	Փոփոխությունն ընթացիկ տարվա համեմատ (n)	Փոփոխությունն ընթացիկ տարվա համեմատ (n)	Փոփոխությունն ընթացիկ տարվա համեմատ (n)
1	2	3	4	5	6
1.Եկամուտներ					
1.1. պետական բյուջեի եկամուտներ					
1.2. ՏԻՄ եկամուտներ					
2. Ծախսեր	10000000	10000000	0	0	0
2.1. պետական բյուջեի ծախսեր	10000000	10000000	0	0	0
2.2. ՏԻՄ բյուջեի ծախսեր					
3. Ֆիսկալ ազդեցության գնահատական					
3.1. պետական բյուջե					
3.3. ՏԻՄ բյուջե					
4. Եկամուտների և	Հիմնավորող նախահաշիվներ				

ծախսերի հաշվարկների մանրամասն ներկայացում (անհրաժեշտության դեպքում կարող է ներկայացվել հավելվածի տեսքով):	
4.1. Եկամուտների գնահատում	
4.2. Ծախսերի գնահատում	Հիմնավորող նախահաշիվներ
5. Այլ տեղեկություններ (եթե այդպիսիք առկա են)	Համաժողովի արդյունքում ստեղծվող ընկերակցությունները ՀՀ պետ բյուջեի ծախսային մասում նոր պարտավորություններ չեն առաջացնում:

Նախագծի ընդունման առնչությամբ ընդունվելիք այլ իրավական ակտերի կամ դրանց ընդունման անհրաժեշտության բացակայության մասին տեղեկանք	
1	Այլ իրավական ակտերում փոփոխությունների և/կամ լրացումների անհրաժեշտությունը
	չկա
2	Միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների հետ համապատասխանությունը
	համապատասխանում է
3	Այլ տեղեկություններ (եթե այդպիսիք առկա են)
	չկան

Տեղեկանք հասարակության մասնակցության մասին	
1	հասարակությանը նախագծի վերաբերյալ իրազեկումը
	Հասարակությանը նախագծի մասին տեղեկացվել է ՀՀ սփյուռքի նախարարի մամլո ասուլիսների, հանդիպումների, ՀՀ սփյուռքի նախարարության պաշտոնական կայքի և էլեկտրոնային պարբերականի միջոցով
2	հասարակության մասնակցությունը նախագծմանը և/կամ քննարկումներին
	Նախագծի քննարկմանը մասնակցել են ՀՀ-ում գործող տարբեր վերլուծական և հետազոտական կենտրոնների ներկայացուցիչներ, որոնք շահագրգիռ կամ տեղյակ են հիմնահարցին:
4	Այլ տեղեկություններ (եթե այդպիսիք առկա են)
	չկան

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Համահայկական մասնագիտական համաժողովների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Համահայկական մասնագիտական համաժողովների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունումը ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի մուտքերի և ելքերի, ինչպես նաև բյուջետային բնագավառում քաղաքականության փոփոխմանը չի հանգեցնում:

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Համահայկական մասնագիտական համաժողովների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ

«Համահայկական մասնագիտական համաժողովների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված Կարգի 9-րդ կետի ենթակետերով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

Իրավական ակտերի փորձաքննության
գործակալության պետ՝ Կ. ԽՏՐՅԱՆ

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Համահայկական մասնագիտական համաժողովների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման

1. «Համահայկական մասնագիտական համաժողովների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման (այսուհետ՝ որոշում) նախագծի ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի հատուկ պահպանվող տարածքների, վրա բացասական հետևանքներ չեն առաջանում:

2. Որոշման նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանում:

3. Որոշման նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին պահանջներին չի հակասում: Որոշման կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Համահայկական մասնագիտական համաժողովների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Համահայկական մասնագիտական համաժողովների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ վերոնշյալ օրենքների նախագծերի ընդունման դեպքում, դրանց կիրարկման արդյունքում տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում զգալի ազդեցություն չի նախատեսվում՝ հաշվի առնելով հետևյալ հանգամանքները.

1. Կարգավորման ենթակա հարաբերությունները հետևանքներ չեն առաջացնում տնտեսական աճի և ներդրումների ներգրավման վրա:
2. «Գործարարությամբ զբաղվելը» համաթվի բաղադրիչները չեն ներառում կարգավորման ենթակա հայցագրերի ընթացակարգերը:
3. ՓՄՁ զարգացման ինդեքսի հաշվարկման հիմքում ընկած ցուցանիշների ցանկը չի ներառում խնդրո առարկա փաստաթղթերի հետ կապված ցուցանիշները:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով զգալի ազդեցություն չհայտնաբերելու եզրակացություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Համահայկական մասնագիտական համաժողովների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Համահայկական մասնագիտական համաժողովների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունմամբ մրցակցային միջավայրի վրա զգալի ազդեցություն չի կարող լինել:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ վերոնշյալ օրենքների նախագծերի ընդունման դեպքում դրանց կիրարկման արդյունքում մրցակցության բնագավառում զգալի ազդեցություն չի նախատեսվում՝ հաշվի առնելով հետևյալ հանգամանքները.

1. Կարգավորման ենթակա հարաբերությունները հետևանքներ չեն առաջացնում ապրանքային շուկայում մատակարարների քանակի ուղղակիորեն սահմանափակմանը կամ սահմանափակման հնարավորությանը:
2. միմյանց հետ մրցելու մատակարարների հնարավորության սահմանափակմանը կամ սահմանափակման հնարավորությանը:
3. միմյանց հետ մրցելու մատակարարների շարժառիթների սահմանափակմանը կամ սահմանափակման հնարավորությանը:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով զգալի ազդեցություն չհայտնաբերելու եզրակացություն:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2009 թվականի
սեպտեմբերի 23-ի N 1104-Ն որոշման պահանջներով

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ սփյուռքի նախարարության կողմից «Համահայկական մասնագիտական համաժողովների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման դեպքում

«Համահայկական մասնագիտական համաժողովների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունումը առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

<<ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՄԲ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՄԲ ՇԱՀԱԳՐԳԻՌ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՍՏԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Առաջակության /դիտողության/ հեղինակը	Առաջարկության բովանդակությունը	Եզրակացությունը
1.ՀՀ կրթության և գիտության նախարարության 01/14/977-11 10.02.2011թ. գրությունը	Հավանություն է տալիս <<Համահայկական մասնագիտական համաժողովների կազմակերպման և անցկացման մասին>> ՀՀ կառավարության որոշման նախագծին:	
2.ԵՊՀ 01/79 11.02.2011թ.	Առաջարկություններ և դիտողություններ չունի:	
3.ՀՀ ԳԱԱ 469 25.02.2011թ. գրությունը	Առաջարկություններ և դիտողություններ չունի;	
4.ՀՀ արդարադատության նախարարության 035/509-11 03.03.2011թ գրությունը	Նախագծի նախաբանով նախատեսվող դրույթները չեն բխում «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներից, մասնավորապես արգելվում է հղումներ կատարել սահմանված կարգով ուժի մեջ չմտած իրավական ակտերին: 2. Նախագծով հաստատվող Հավելված 1-ի կետերի համարակալումն անհրաժեշտ է համապատասխանեցնել <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի 4-րդ մասերի պահանջներին, որոնց համաձայն իրավական ակտերում դրույթները շարադրվում են հերթական համար ունեցող կետերի տեսքով	Ընդունվել է, կատարվել է փոփոխություն: